

սերունդէին: Եւ տուին, ու նահանջեցին
 իրենց գիծերէն: Անմեռ ուման թիքակա-
 նութիւնը խորհրդապաշտութեան մէջ վը
 վերածաղկէր, բայց աւելի զուսպ, աւելի
 փակ ու նուազագոյն յորդումով զգացու-
 մի: Իմացականը կը փոխանակէր զգացա-
 կան տարրը, այսինքն միտքը կը կտրա-
 տէր զգացումին անչափօրէն տարածուն
 թեւերը, եւ փիլիսոփայական խորքի մը
 պահանջը սանձ կը դնէր երեւակայու-
 թեան խիղախումներուն: Բնութեան նկա-
 րագրութիւնները, եւ հոգեկան ապրում-
 ներու անսահման սրտադեղումները դա-
 ղափարապաշտութեամբ փոխանակուած,
 նոր արուեստի մը առջեւ կը դնէին բանա-
 ստեղծական բուղիքը, կառուցումը: Ներ-
 դաշնակութեան պահանջն ալ, ուրիշ տե-
 սակէտ մը: Մեր լաւագոյն քերթողները
 Վերլէնի դաշնակութեան սկզբունքին յա-
 բեցան, ու խնամեցին ձեւը, վարեւորու-
 թիւն տուին սահունութեան, բնորու-
 թեամբ բառերու եւ պատշաճագոյն դասա-
 ւորումովը անոնց՝ ստանալու համար երա-
 ժըշտականութիւն: Այս պայմանները լի-
 ուրի գոհացուցին 1900ի սերունդէն՝ Վա-
 րուժան, Մեծարենց, Թէքէեան, Թուման-
 եան, Իսահակեան, Տէրեան, որոնց խոր
 գիտակցութիւնը, արուեստի ու գեղեցկու-
 թեան լմբռնումը, անկեղծ, հարազատ
 խորքովը՝ որ կը համապատասխանէ հա-
 ւատարմօրէն անոնց ապրումներուն եւ ըզ-
 դայնութեան, փշարիտ (ըստ Օշականի
 իրաւ) բանաստեղծը կը յայտնեն անոնց
 մէջ:

Նոր շրջանի հայկական բանաստեղծու-
թեան մէջ ուշադրաւ կէտ մըն է նաեւ
յայտնութիւնը բանաստեղծուհիներու:
Սիպիլ անոնց ճամբան հարթողը եղաւ:
Յովհեր-ը 1900ի սեմին վրայ հրաւէր մըն
էր Կանադի գրականութիւններու թեւաւոր-
ման: Իր արդեւեցութիւնը ստեղծեց արտա-
կարգ շարժում: Անայիտ, Զարուհի Գա-
լէմբեարեան, Հայկանոյշ Մառք, յիշա-
տակելու համար գլխաւորները պատկանե-
լի խմբակի մը, իրենց մտքին ու սրտին

Ճաղիկները ասիունցին ժամանակակից թերթերում մեջ, ինչպես «Մասիս», «Ծաղիկ» եւ այլն :

Գեղարուեստի բոլոր տեսակները, գեղեցիկ դանազան երեսակները՝ բանաստեղծութիւնը, վէպը, երաժշտութիւնը, նրկարչութիւնն ու քանդակագործութիւնը Օսմանեան Սահմանադրութեան թուակառնէն ազդին, նոր սերունդին ողբէին փարամուլը ակաւ քայլեր առնել արի, վըստահ, խանդավառ, յուսալից՝ մինչեւ 1914ի Ապրիլը, երբ բոլոր ձեռնարկները խամբեցան կոտորածներու ահաւոր խորշակով։ Արեւելի շատ միջակ, բայց խանդավառութեամբ եւ յանդուութեամբը նըշանաւոր՝ Մերութեան Պարսամեան, «Ծաղիկ» դրական թերթէն վերը հրապարակը բռնեց իր «Շանթ»՝ Կիսամսեայ հանդէսով, որուն գրական-գեղարուեստական բաժինները հրապուրիչ էին ու միանդամայն մըղիչ ազդակ գեղեցիկի ճաշակի դարդացման։ Ոստան (1911-12, 1919-20) դարձեալ գըրական կարեւոր թերթ մը Շամսանձեանի եւ Տ. Չօկիւրեանի նախաձեռնութեամբ։ Ասոնք պարզապէս ըսելու համար՝ թէ պոլսահայ գրականութիւնը 1900ական թուականներուն կ'ապրէր կեանք մը, երազով, ողբելորութեամբ, ծրագրուած աշխոյժով։ Ա. Չօպանեանի Անախիտը Պուսէն դուրս, ուրիշ նկատելի շտեմարան մը, ուր կը խմբուէին արտասահմանի գրողները։

ԻՐԻ ԵԶՐԱՓԱԿՈՒՄ, աւելցնենք՝ որ բազմաբարդ են ապրումները 1900ի բանաստեղծներուն: Կեանքը՝ դուր կ'ըմբռնեն ու կ'ապրին, եւ կեանքը դուր կ'երգեն չէ այն երազային կեանքը, որ ոռմանթիքներունն էր, այլ չարատանջօրէն ապրուած, տառապանքով չաղախուն: Եւ ոչ ալ դասականներու չափուած, անջիղ կեանքը՝ որ բնականութիւնն է, այլ անձնական, առանց սակայն ետապաշտութեամբ թանձրանալու: Կեանքի այդ բանաստեղծութիւնը անկեղծ, ճշմարիտ, ուղիղ թա-

Վանքում մըն է բարախուն իրականու-
թեան, որուն կնիքը հարադատութեանն է
երգողի հոգևոյն հետ:

Կեանքը սիրով, ցաւով ու տառապանքով է կեանք: Եւ արդարեւ 1900ի տերուն-
դը երգեց սէրը, Վերգեց ցաւը, երգեց տա-
ռապանքը: Ու այս տառապանքի դերա-
դոյն երգը նուիրականացաւ անոնց քով
Հայրենի ողբերգութեամբ: Վարուժան,
Սիւրամանթօ, Սեւակ, Եղ. Գօլանճեանն իսկ
(որ մօտէն վը հետեւի Վարուժանի), հը-
պած են այդ լարին ուժգնադոյն դարկով:
Հեռու մայր հողէն եւ դաւառի կեանքի
անմիջական ազդեցութիւններէն, այդ ար-
տասահմանեան բանաստեղծները ապրե-
ցան կոտորածներու ահաւոր դառնու-
թեամբ: Ոմանց քով հիմնական դիժը կը
կազմէ Հայրենիքի ողբը եւ ցաւին մօըն-
չիւնները, ուրիշներու քով համեմատու-
թեամբ նուազադոյն աստիճանի վրայ,
սակայն միշտ կենդանի է սրտակեղեք ըզ-
րացումը որ դանոնք վը տոչորէ: Ցեղին
սիրտը, Դիւցազնօրէն-ը, Հոգեվարքի եւ
յայսի ջախեր-ը, Հայորդիները, Կարմիր

գիրքը, մկալութիւններ և հայկական
կեանքի տառապալից շրջանէն:

Ազգային ողբերգութենէն զատ, ուր
ցաւին երգը իր գերազոյն պոռթկումին կը
հասնի, կայ անձնական ցաւին երգը, հո-
գեկան տրամութիւնը, մանաւանդ Վա-
րուժանին մօտ: Ասիկա ապացոյց մը ճշ-
մարիտ բանաստեղծի ներանձնականու-
թեան եւ խորագոյն զգայնութեան: Եր-
րորդ մտքիւր բնութեան զգացումը, այն-
քան գողտրիկ Մեծարեցիին քով, բայց եւ
նոյնքան զեղեցիկ Վարուժանի հատոր-
ներուն մէջ ցրուած: Կայ նաեւ զազաւարի
կեանք մ'ալ, փիլիսոփայական հայեացք-
ներու, տեսութիւններու բանաստեղծա-
կան երգը: Ու ասիկա թէքէեանով կը մըտ-
նէ մեր մէջ:

Ընդհանուրի վերաբերեալ այս տեսու-
թիւնները պիտի գտնեն իրենց մանրամաս-
նութեան եւ ճշտումի վկայութիւնները՝
երբ յաջորդաբար ակնարկուած դէմքերը
քննութեան առնենք՝ ներկայացնելով,
լուսարանելով, դատելով:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

